# УСТАВЪ

# АРМЯНСКАГО ДРАМАТИЧЕСКАГО ОБЩЕСТВА

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Ар
1447

ИФЛИСЪ
ія „ГЕРМЕСЪ“
1913

Общ.
792(Ар)
А-839
1999

# УСТАВЪ

## АРМЯНСКАГО ДРАМАТИЧЕСКАГО

## ОБЩЕСТВА

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ

## ՀԱՅՈՑ

## ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ТИФЛИСЪ
Типографія „ГЕРМЕСЪ"
1913

1447-99
2В 1442
(0110-60)

Журнальнымъ постановленіемъ Тифлисскаго Губернскаго по дѣламъ объ обществахъ Присутствія отъ 4 марта 1913 г. Армянское Драматическое Общество внесено въ реестръ подъ № 200. Настоящій уставъ утвержденъ и къ возникновенію дѣятельности означеннаго общества препятствій не встрѣчается. Марта 19 дня 1913 г.

И. д. Губернатора *Е. Пановъ*.

# УСТАВЪ

## Армянскаго Драматическаго Общества.

### I. Учрежденіе Общества и его цѣль

Армянское Драматическое Общество преобразовывается на нижеслѣдующихъ условіяхъ:

§ I. Армянское Драматическое Общество учреждается въ гор. Тифлисѣ съ цѣлью содѣйствовать развитію драматическаго искусства среди армянъ, а также устройству постоянныхъ и случайныхъ армянскихъ спектаклей.

ПРИМѢЧАНІЕ. Устройство Обществомъ спектаклей допускается лишь съ особаго на то каждый разъ разрѣшенія подлежащей власти и съ соблюденіемъ всѣхъ дѣйствующихъ на сей предметъ правилъ и распоряженій правительства

§ 2. Въ видахъ достиженія означенной цѣли, Общество имѣетъ право:

а) Пріобрѣтать и отчуждать, а также брать и отдавать въ пользованіе, на прокатъ, въ аренду и подъ залогъ движимое и недвижимое имущество и авторское право на драматическія произведенія,

Ընկերութիւններին վերաբերեալ գործերի Թիֆլիսի Նահանգական Ատեանի 1913 թուի Մարտի 4-ին կայացած օրագրական որոշմամբ Հայոց Դրամատիկական Ընկերութիւնը մուծուած է ռէէստր № 200-ով, այս կանոնադրութիւնը հաստատած է և յիշեալ ընկերութեան գործունէութեան սկզբնաւորութեան նկատմամբ արգելքներ չը կան: 1913 թուի Մարտի 19-ին: Նահանգապետի պաշտօնակատար Ե. Պանով:

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ

## ՀԱՅՈՑ ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

### I. *Ընկերութեան կազմակերպութիւնը եւ նպատակը*

Հայոց դրամատիկական ընկերութիւնը վերակազմւում է հետեւեալ պայմաններով:

§ 1. Հայոց դրամատիկական ընկերութիւնը հիմնւում է Թիֆլիսում՝ հայերի մէջ դրամատիկական արուեստի զարգացմանը նպաստելու և մշտական ու պատահական հայկական ներկայացումներ կազմակերպելու նպատակով:

Ծանօթութիւն.—Ընկերութիւնը իրաւունք ունի ներկայացումներ տալ՝ իւրաքանչիւր անգամի համար թոյլտուութիւն ստանալով պատշաճաւոր իշխանութիւնից, և պահպանելով այդ մասին գոյութիւն ունեցող բոլոր կանոններն ու կառավարութեան կարգադրութիւնները:

§ 2. Յիշեալ նպատակին հասնելու համար ընկերութիւնը իրաւունք ունի.

ա.) Ձեռք բերել և տալ ուրիշներին ի սեփականութիւն, նոյնպէս և վերցնել ու տալ ի շահեցումն, վարձովի, կապալով և ի գրաւ՝ շարժական ու անշարժ կայքեր և թատերական գրուածքների հեղինակային իրաւունք, պայմաններ կապել, պաշտպանել դատարանում իր շահերը

заключать договоры и сдѣлки, защищать свои интересы въ Судѣ черезъ уполномоченныхъ, назначаемыхъ по постановленію Общаго Собранія или Совѣта, и вообще пользоваться всѣми правами, предоставленными юридическимъ лицамъ;

б) Издавать, съ соблюденіемъ цензурныхъ правилъ, на армянскомъ языкѣ, оригинальныя и переводныя драматическія произведенія, а также сборники и періодическій органъ, посвященные вопросамъ театра и искусства;

ПРИМѢЧАНІЕ. Либретто и сценарій для объясненія спектаклей могутъ быть издаваемы и на русскомъ языкѣ;

в) Назначать преміи на лучшія драматическія произведенія на армянскомъ языкѣ;

г) Устраивать, съ надлежащаго на то каждый разъ разрѣшенія, публичныя лекціи, театральные классы, курсы, библіотеки и читальни для подготовки и развитія сценическихъ дѣятелей;

д) Созывать, съ налдежащаго разрѣшенія, съѣзды сценическихъ дѣятелей армянъ;

е) Выдавать пособія и пенсіи нуждающимся сценическимъ дѣятелямъ армянамъ и ихъ семействамъ, и

ж) учреждать, съ надлежащаго разрѣшенія, стипендіи для подготовки дѣятелей для армянской сцены.

## II. Средства Общества.

§ 3. Средства Общества составляются.

а) изъ взносовъ его членовъ;



ընդհանուր ժողովի կամ խորհրդի որոշմամբ նշանակուած լիազօրների միջոցով և առհասարակ օգտուել իրաւաբանական մարմիններին յատկացուած բոլոր իրաւունքներով։

բ) Հրատարակել, գրաքննական կանոններին համակերպելով, հայերէն ինքնուրոյն և թարգմանական դրամատիկական երկեր, ինչպէս նաև թատրոնական և գեղարուեստական հարցերին նուիրուած ժողովածուներ և պարբերական հանդէս կամ թերթ։

Ծանօթութիւն.—Ներկայացումները բացատրելու համար լիբրէտոներ և սցէնարիումներ կարելի է հրատարակել նաև ռուսերէն լեզուով։

գ) Մրցանակներ նշանակել հայերէն ամենալաւ թատերագրական երկերի համար։

դ) Կազմակերպել՝ իւրաքանչիւր անգամին պատշաճաւոր իշխանութեան թոյլտուութեամբ՝ դասախօսութիւններ, թատերական դասարաններ, դասընթացքներ, գրադարաններ և ընթերցարաններ բեմական գործիչների պատրաստութեան և զարգացման համար։

ե) Գումարել, պատշաճաւոր իշխանութեան թոյլտուութեամբ, հայ բեմական գործիչների համագումարներ

զ) Օժանդակութիւններ ու կենսաթոշակներ տալ կարիքաւոր հայ բեմական գործիչներին ու նրանց ընտանիքներին, և

է) հիմնել, պատշաճաւոր թոյլտուութեամբ թոշակներ հայ բեմի համար գործիչներ պատրաստելու նպատակով։

б) изъ сборовъ со спектаклей, устраиваемыхъ самимъ Обществомъ;

в) изъ опредѣляемой по добровольному соглашенію части сбора со спектаклей, устраиваемыхъ при содѣйствіи Общества;

г) изъ процентовъ съ капитала Общества, изъ доходовъ съ его имущества, предпріятій и изданій, а также изъ гонорара авторскаго права на драматическія произведенія;

д) изъ случайныхъ въ пользу Общества поступленій, какъ-то: пожертвованія, отказы по завѣщанію и т. п., и

е) изъ имущества бывшаго Драматическаго Общества въ Тифлисѣ.

§ 4. Капиталы и прочее имущество Общества сохраняются по усмотрѣнію и подъ отвѣтственностью членовъ Центральнаго Совѣта и мѣстныхъ правленій.

## III. Составъ Общества.

§ 5. Общество состоитъ изъ членовъ: почетныхъ, пожизненныхъ, дѣйствительныхъ и членовъ—соревнователей. Членами Общества могутъ быть лица обоего пола, безъ различія званій.

ПРИМѢЧАНІЕ. Членами Общества не могутъ быть: а) несовершеннолѣтніе, за исключеніемъ имѣющихъ классные чины: б) учащіеся въ учебныхъ заведеніяхъ; в) состоящіе на дѣйствительной службѣ нижніе воинскіе чины и юнкера, и г) подвергшіеся ограниченію въ правахъ по суду и



## II. Ընկերութեան միջոցները

§ 3. Ընկերութեան միջոցները կազմում են.

ա) Անդամավճարները.

բ) Ընկերութեան կազմած ներկայացումների մուտքը.

գ) Ընկերութեան աջակցութեամբ կազմուած ներկայացումների մուտքի բարեյօժար համաձայնութեամբ որոշուած մասը.

դ) Ընկերութեան դրամագլխի տոկոսները, նրա գոյքի, ձեռնարկութիւնների և հրատարակութիւնների եկամուտը, ինչպէս և դրամատիկական երկերի հեղինակային իրաւունքի համար ստացուած վարձատրութիւնը.

ե) Յօգուտ ընկերութեան ստացուած պատահական մուտքերը, ինչպէս օրինակ նուիրատուութիւններ, կտակած գումարներ և այլն և

զ) Նախկին Թիֆլիսի Հայոց Դրամատիկական Ընկերութեան գոյքը։

§ 4. Ընկերութեան դրամագլուխները և մնացեալ գոյքերը պահում են կենտրոնական խորհրդի և տեղական վարչութիւնների հայեցողութեամբ և պատասխանատուութեամբ։

## III. Ընկերութեան կազմը

§ 5. Ընկերութիւնը բաղկանում է պատուաւոր, մշտական, գործադիր և աջակից անդամներից։ Ընկերութեան անդամ կարող են լինել երկու սեռի անձինք, առանց կոչման խտրութեան։

Ծանօթութիւն.—Ընկերութեան անդամ չեն կարող լինել.

состоящіе подъ судомъ и слѣдствіемъ по обвиненію въ преступленіяхъ, влекущихъ за собой ограниченіе въ правахъ.

§ 6. Въ почетные члены избираются Общимъ Собраніемъ лица, оказавшія или могущія оказать армянскому театральному искусству важныя услуги личною своей дѣятельностью, а также пожертвовавшія въ пользу Общества не менѣе 1000 рублей.

§ 7. Пожизненными членами признаются лица, пожертвовавшія Обществу единовременно не менѣе 50 рублей.

ПРИМѢЧАНІЕ. Лица, состоявшія почетными и пожизненными членами Армянскаго Драматическаго Общества до измѣненія устава, остаются въ томъ же званіи, а бывшіе члены-учредители считаются пожизненными членами преобразованнаго Общества.

§ 8. Дѣйствительными членами признаются лица, изъявившія желаніе вносить въ пользу Общества не менѣе трехъ руб. ежегодно и выбранныя въ это званіе Общимъ Собраніемъ.

§ 9. Членъ Общества, не внесшій къ опредѣленному Общимъ Собраніемъ сроку членскаго взноса, считается выбывшимъ изъ Общества.

§ 10. Лица, которыя своею безвозмездною дѣятельностью содѣйствуютъ цѣлямъ Общества, могутъ быть избираемы, по представленію Совѣта или Правленія, Общимъ Собраніемъ въ члены—соревнователи безъ уплаты денежныхъ взносовъ.



ա) Անչափահասները, բացի աստիճան ունեցողներից.

բ) Դպրոցների աշակերտները.

գ) Իսկական ծառայութեան մէջ եղող ստորին զինւորականները և իւնկերները և

դ) Դատարանով իրաւունքների սահմանափակման ենթարկուածները և դատի ու դատաքննութեան տակ եղողները այնպիսի յանցանքների համար, որոնց հետևանքը կարող է լինել իրաւունքների սահմանափակումն։

§ 6. Պատուաւոր անդամ ընտրում է ընդհանուր ժողովը այն անձերին, որոնք իրենց անձնական գործունէութեամբ մեծ ծառայութիւն են մատուցել կամ կարող են մատուցանել հայկական թատերական արուեստին, նաև ընկերութեան օգտին 1000 րուբլուց ոչ պակաս նուիրողներին։

§ 7. Մշտական անդամ են համարւում այն անձինք, որոնք նուիրում են ընկերութեան միանուագ ոչ պակաս քան 50 րուբլի։

Ծանօթութիւն.—Այն անձինք, որոնք Հայոց դրամատիկական ընկերութեան պատուաւոր և մշտական անդամ են եղել մինչև կանոնադրութեան փոփոխութիւնը, պահում են իրանց կոչումը, իսկ ընկերութեան նախկին հիմնադիրները համարւում են վերակազմուած ընկերութեան մշտական անդամներ։

§ 8. Գործադիր անդամներ համարւում են այն անձինք, որոնք ցանկութիւն են յայտնում վճարել ի նպաստ ընկերութեան տարեկան ոչ պակաս՝ քան 3 րուբլի և ընտրւում են ընդհանուր ժողովի կողմից։

§ 9. Ընկերութեան այն անդամը, որ ընդհանուր ժողովի որոշած ժամանակամիջոցում չի վճարում անդամավճարը, հրաժարուած է համարւում ընկերութիւնից։

§ 10. Այն անձինք, որոնք իրենց անվճար

§ 11. Всѣ члены Общества, безъ различія наименованій, пользуются одинаковымъ голосомъ при рѣшеніи дѣлъ на Общихъ Собраніяхъ.

ПРИМѢЧАНІЕ. Членъ Общества, дѣятельность коего не соотвѣтствуетъ интересамъ Общества, может быть исключенъ изъ состава Общества по постановленію Общаго Собранія.

## IV. Управленіе дѣлами Общества.

§ 12. Дѣлами Общества завѣдываютъ:

а) Общія Собранія его членовъ;

б) Центральный Совѣтъ и мѣстныя Правленія, и

в) Ревизіонныя комиссіи.

§ 13. Общія Собранія членовъ бываютъ обыкновенныя и чрезвычайныя.

Обыкновенныя Общія Собранія Общества созываются Предсѣдателемъ Совѣта, а мѣстныхъ отдѣленій—Предсѣдателями Правленій разъ въ годъ, по окончаніи театральнаго сезона, для избранія должностныхъ лицъ Общества, для выслушанія отчета Совѣта и Правленій за истекшій годъ, утвержденія смѣты на будущій годъ, а также журнала ревизіонной комиссіи, по разсмотрѣнію оныхъ состоявшагося.

Чрезвычайныя же Собранія могутъ быть созываемы Предсѣдателями во всякое время для рѣшенія дѣлъ и вопросовъ, не терпящихъ отлагательства, а также по требованію ревизіонной комиссіи или по заявленію не менѣе 25 членовъ



գործունէութեամբ նպաստում են ընկերութեան նպատակներին, կարող են, խորհրդի կամ վարչութեան առաջարկով, ընդհանուր ժողովի կողմից նպաստող անդամ ընտրուել առանց դրամական վճար տալու։

§ 11. Ընկերութեան բոլոր անդամները, առանց խտրութեան, ընդհանուր ժողովներում հաւասար ձայն ունեն վճիռ կայացնելիս։

Ծանօթութիւն.—Ընկերութեան այն անդամը, որի գործունէութիւնը չի համապատասխանում ընկերութեան շահերին, կարող է ընդհանուր ժողովի որոշմամբ հրաժարեցնուել ընկերութիւնից։

## IV. Ընկերութեան գործերի կառավարութիւնը

§ 12. Ընկերութեան գործերը վարում են.

ա.) Նրա անդամների ընդհանուր ժողովները.

բ) Ընկերութեան կենտրոնական խորհուրդը և տեղական վարչութիւնները և

գ) Վերաստուգող յանձնաժողովները։

§ 13. Անդամների ընդհանուր ժողովները լինում են սովորական և արտակարգ։ Ընկերութեան սովորական ընդհանուր ժողովները հրաւիրում է խորհրդի նախագահը, իսկ տեղական ճիւղերի ժողովները՝ վարչութիւնների նախագահները տարէնը մի անգամ, թատերական սէզօնի վերջանալուց յետոյ, որպէսզի ընտրեն ընկերութեան պաշտօնավոր անձերին, քննեն խորհրդի և վարչութիւնների ներկայացրած անցած տարուայ հաշիւը, հաստատեն առաջիկայ տարուայ նախահաշիւը, ինչպէս և վերաստուգող յանձնա-

Общества въ Тифлисѣ или 1/10 всѣхъ членовъ Отдѣленія.

§ 14. Общее Собраніе, какъ чрезвычайное, такъ и обыкновенное, считается состоявшимся, когда въ немъ присутствуютъ не менѣе 1/5 всѣхъ членовъ, находящихся въ Тифлисѣ, или мѣстнаго Отдѣленія. Если означеннаго числа членовъ въ Собраніе не явится, то Собраніе объявляется, не состоявшимся, и для разсмотрѣнія тѣхъ же вопросовъ созывается, не ранѣе семи дней, новое Общее Собраніе, которое, считается состоявшимся, какое бы число членовъ на оное ни явилось, о чемъ члены въ пригласительныхъ повѣсткахъ или газетныхъ объявленіяхъ предупреждаются.

ПРИМѢЧАНІЕ. О днѣ, часѣ, мѣстѣ и предметахъ занятія всѣхъ Общихъ Собраній Совѣтъ и Правленія обязаны заблаговременно увѣдомлять начальника мѣстной полиціи и членовъ Общества.

§ 15. Въ Общемъ Собраніи предсѣдательствуетъ одинъ изъ членовъ Общества, не принадлежащихъ къ составу Совѣта, Правленій и ревизіонной комиссіи, по особому каждый разъ избранію, производимому при самомъ открытіи Общаго Собранія; открываетъ же Общее Собраніе Предсѣдатель Совѣта или Правленія.

§ 16. Дѣла въ Общихъ Собраніяхъ рѣшаются простымъ большинствомъ голосовъ присутствующихъ членовъ, за исключеніемъ вопросовъ: о пріобрѣтеніи, отчужденіи и закладѣ имѣній, о выборѣ почетныхъ членовъ, объ исключеніи членовъ изъ состава Общества и объ измѣненіи



ժողովի օրագրութիւնը այդ հաշւի ու նախահաշւի մասին:

Արտակարգ ժողովներ կարող են հրաւիրել նախագահները ամեն ժամանակ՝ անյետաձգելի գործեր ու հարցեր վճռելու համար և նմանապէս վերստուգող յանձնաժողովի պահանջմամբ և կամ ընկերութեան Թիֆլիսի առնուազն 25 անդամների կամ ճիւղի բոլոր անդամների $^1/_{10}$ մասի ցանկութեամբ:

§ 14. Ընդհանուր ժողովը, թէ արտակարգը և թէ սովորականը, կայացած է համարւում, եթէ ներկայ են Թիֆլիսում գտնուող կամ տեղական ճիւղին պատկանող անդամներից առնուազն $^1/_5$ մասը: Իսկ եթէ այդքան անդամներ ներկայ չեն, այն ժամանակ ժողովը յայտարարւում է չը կայացած և միևնոյն խնդիրների քննութեան համար հրաւիրւում է, եօթը օրից ոչ վաղ. նոր ընդհանուր ժողով, որ կայացած է համարւում՝ քանի անդամ էլ որ գան, և այդ մասին անդամները հրաւիրագրերի կամ լրագրական յայտարարութիւնների միջոցով նախազգուշացւում են:

Ծանօթութիւն.—Ընդհանուր ժողովների օրւայ, ժամի, տեղի և զբաղմունքի առարկաների մասին խորհուրդը և վարչութիւնը պարտաւոր են նախապէս տեղեկացնել տեղական ոստիկանութեան իշխանաւորին և ընկերութեան անդամներին:

§ 15. Ընդհանուր ժողովին նախագահում է խորհրդի, վարչութիւնների և վերստուգող յանձնաժողովների կազմին չը պատկանող անդամներից մէկը իւրաքանչիւր անգամ առանձին ընտրութեամբ, որ կատարւում է ընդհանուր ժողովը բանալուն պէս: Իսկ ընդհանուր ժողովը բաց

и дополненіи сего устава, кои разсматриваются въ Общемъ Собраніи Общества въ Тифлисѣ и разрѣшаются большинствомъ 2/3 голосовъ, и о закрытіи Общества и ликвидаціи его имущества, для разрѣшенія каковаго вопроса необходимо присутствіе въ Общихъ Собраніяхъ 2/3 всѣхъ членовъ, находящихся въ Тифлисѣ или мѣстнаго Отдѣленія и большинство 2/3 всѣхъ голосовавшихъ, при чемъ результаты голосованій въ мѣстныхъ Общихъ Собраніяхъ сообщаются, съ обозначеніемъ числа всѣхъ членовъ, подавшихъ за и противъ, Совѣту Общества, который дѣлаетъ подсчетъ всѣхъ голосовъ, поданныхъ за и противъ, какъ въ Тифлисѣ, такъ и въ мѣстныхъ Отдѣленіяхъ.

ПРИМѢЧАНІЕ. Голосованіе на Общихъ Собраніяхъ производится закрытою или открытою баллотировкою, по усмотрѣнію Собранія. Но въ случаѣ, указанномъ въ § 18 и 30, а также и въ случаѣ требованія 10-ти членовъ Собранія, обязательна закрытая баллотировка.

§ 17. Общія Собранія имѣютъ предметомъ своихъ занятій:

а) разсмотрѣніе и утвержденіе смѣтъ и отчетовъ Общества;

б) разсмотрѣніе и разрѣшеніе предположеній и докладовъ Совѣта или Правленія и заявленій членовъ о мѣрахъ, могущихъ содѣйствовать достиженію цѣлей Общества;

в) составленіе и утвержденіе правилъ и инструкцій по различнымъ частямъ управленія



է անում խորհրդի կամ վարչութեան նախագահը։

§ 16. Ընդհանուր ժողովներում խնդիրները վճռւում են ներկայ եղող անդամների ձայների հասարակ մեծամասնութեամբ, բացի հետեւեալ հարցերից,—կայքերի սեփականութեան իրաւունք ձեռք բերելը ու ուրիշին տալը և գրաւ ընդունելն ու գրաւ դնելը, պատւաւոր անդամների ընտրութիւնը, ընկերութիւնից որեւէ անդամի հեռացնելը և այս կանոնադրութեան փոփոխութիւնն ու լրացումն, որոնք քննւում են ընկերութեան ընդհանուր ժողովում Թիֆլիսում ու որոշւում են ձայների $^2/_3$ մեծամասնութեամբ, և ընկերութեան փակման ու լիկվիդացիայի հարցից, որի լուծման համար անհրաժեշտ է, որ ընդհանուր ժողովներում ներկայ լինեն Թիֆլիսում գտնւող կամ տեղական ճիւղի անդամների $^2/_3$ մասը և որ ստացւի քուէարկողների ձայների $^2/_3$ մեծամասնութիւն։ Դրա համար՝ տեղական վարչութիւնները պէտք է տեղական ժողովներում թէր և դէմ քուէարկողների թիւը հաղորդեն ընկերութեան խորհրդին, որ վերջնականօրէն հաշւում է թէ Թիֆլիսում և թէ տեղական ճիւղերում բոլոր թէր և դէմ քուէարկողների ընդհանուր թիւը։

Ծանօթութիւն.—Ընդհանուր ժողովներում ձայնատւութիւնը կատարւում է գաղտնի կամ բաց քուէարկութեամբ, ըստ ժողովի հայեցողութեան։ Բայց §§ 18 և 30-ում յիշւած դէպքում, ինչպէս և ժողովի 10 անդամի պահանջելիս՝ պարտադիր է գաղտնի քուէարկութիւն։

§ 17. Ընդհանուր ժողովների պարապմունքի խնդիրներն են՝

ա) Ընկերութեան նախահաշիւների և հաշիւների քննութիւնը ու հաստատութիւնը։

дѣлами Общества, а также и программъ и условій на соисканіе премій;

г) избраніе Предсѣдателя Общаго Собранія, членовъ Совѣта или Правленія и комиссій, а равно и членовъ Общества.

ПРИМѢЧАНІЕ 1. Предположенія членовъ Общества вносятся въ Общее Собраніе черезъ Предсѣдателя Совѣта или Правленія и должны быть представлены Совѣту или Правленію по крайней мѣрѣ за семь дней до Общаго Собранія

ПРИМѢЧАНІЕ 2. Къ обсужденію въ ОбщихъСобраніяхъ допускаются лишь предметы, непосредственно относящіеся къ опредѣленной уставомъ дѣятельности Общества и лишь тѣ, о коихъ заблаговременно доведено до свѣдѣнія начальника мѣстной полиціи и членовъ Общества.

## V. Центральный Совѣтъ.

§ 18. Для ближайшаго завѣдыванія всѣми дѣлами Общества и для исполнительныхъ по нимъ дѣйствій, Общее Собраніе въ Тифлисѣ избираетъ изъ числа членовъ Общества, Совѣтъ Общества, являющійся Центральнымъ Органомъ всего Общества, и состоящій изъ семи членовъ и трехъ къ нимъ кандидатовъ.

§ 19. Члены Совѣта избираются на три года, а кандидаты на одинъ годъ.

ПРИМѢЧАНІЕ 1. Во избѣжаніе единовременнаго выбытія членовъ Совѣта, ежегодно выбываетъ 2—3 члена (2, 2 и 3), при чемъ въ первые два года по преобразованіи Общества по жребію' а затѣмъ по старшинству избранія.



*բ) Խորհրդի կամ վարչութիւնների առաջադրութիւնների ու զեկուցումների, ինչպէս նաև ընկերութեան անդամների այն առաջարկների քննութիւնն ու որոշումը, որոնք կարող են ընկերութեան նպատակների իրագործման նպաստել:*

*գ) Ընկերութեան գործերի կառավարութեան զանազան մասերին վերաբերեալ կանոնների և հրահանգների, ինչպէս և մրցանակաբաշխութիւնների համար ծրագիրների և պայմանների մշակումն ու հաստատումը:*

*դ) Ընդհանուր ժողովի նախագահի, խորհրդի կամ վարչութիւնների և յանձնաժողովների անդամների, ինչպէս և ընկերութեան անդամների ընտրութիւնը:*

*Ծանօթութիւն I.—Ընկերութեան անդամների առաջադրութիւնները խորհրդի կամ վարչութեան նախագահի միջոցով են ընդհանուր ժողովին առաջարկւում և պէտք է խորհրդին կամ վարչութեան ներկայացւեն ընդհանուր ժողովից գոնէ եօթ օր առաջ:*

*Ծանօթութիւն II.—Ընդհանուր ժողովների քննութեան ենթարկւում են միայն այնպիսի խնդիրներ, որոնք անմիջապէս վերաբերւում են ընկերութեան կանոնադրութեամբ սահմանուած գործունէութեան, և որոնց մասին նախապէս ծանուցուած է տեղական ոստիկանութեան իշխանաւորին և ընկերութեան անդամներին:*

## V. Կենտրոնական խորհուրդ

*§ 18. Ընկերութեան բոլոր գործերը անմիջապէս կառավարելու և նրանց վերաբերեալ որոշումները ի կատար ածելու համար՝ Թիֆլիսի ընդհանուր ժողովը ընկերութեան անդամների միջից ընտրում է ընկերութեան մի խորհուրդ,*

1447.99
1922

ПРИМѢЧАНІЕ 2. Кандидаты замѣняютъ членовъ Совѣта на случай продолжительнаго отсутствія изъ Тифлиса, болѣзни, смерти и т. п. до годичнаго собранія.

§ 20. Совѣтъ избираетъ изъ своей среды Предсѣдателя, Товарища Предсѣдателя, Секретаря и Казначея.

ПРИМѢЧАНІЕ 1. Товарищъ Предсѣдателя заступаетъ мѣсто Предсѣдателя въ случаѣ его болѣзни или его отсутствія.

ПРИМѢЧАНІЕ 2. Обязанности Секретаря и Казначея опредѣляются инструкціею, выработанною Совѣтомъ и утвержденною Общимъ Собраніемъ.

§ 21. Совѣтъ имѣетъ предметомъ своихъ занятій:

а) Исполненіе всѣхъ законныхъ постановленій Общаго Собранія;

б) Веденіе инвентаря, приходо—расходныхъ книгъ и отчетности по имуществу, дѣламъ и суммамъ Общества, равно какъ и списка членовъ Общества;

в) Веденіе переговоровъ, заключеніе условій и расчетовъ съ труппами, антрепренерами и любителями;

г) Завѣдываніе, подъ отвѣтственностью и отчетностью передъ Общимъ Собраніемъ, всѣмъ имуществомъ и всѣми дѣлами Общества;

д) Снабженіе труппъ и кружковъ любителей репертуаромъ, аксессуарами и прочими средствами къ устройству спектаклей;



-որ ամբողջ ընկերութեան կենտրոնական մարմինն է հանդիսանում և բաղկանում է եօթ անդամից և երեք փոխանդամից։

§ 19. Խորհրդի անդամները ընտրւում են երեք տարով, իսկ փոխանդամները մի տարով։

Ծանօթութիւն 1.—Առաջնակի խորհրդի բոլոր անդամները միասին չը փոխւում, իւրաքանչիւր տարի հեռանում են 2 կամ 3 անդամ (2, 2 և 3), և այն՝ ընկերութեան վերակազմութեան հետեւող առաջին երկու տարիները վիճակով, իսկ այնուհետև ընտրութեան աւագութեամբ։

Ծանօթութիւն 2.—Փոխանդամները փոխարինում են խորհրդի անդամներին մինչև տարեկան ընդհանուր ժողովը այն դէպքերում, երբ խորհրդի որևէ անդամ երկար ժամանակով բացակայում է Թիֆլիսից, հիւանդ է լինում, մեռնում է և այլն։

§ 20. Խորհուրդը իր միջից ընտրում է մի նախագահ, մի փոխնախագահ, մի քարտուղար և մի գանձապահ։

Ծանօթութիւն 1.—Փոխնախագահը փոխարինում է նախագահին նրա հիւանդութեան կամ բացակայութեան դէպքում։

Ծանօթութիւն 2.—Քարտուղարի և գանձապահի պարտականութիւնները որոշւում են խորհրդի մշակած և ընդհանուր ժողովից հաստատւած հրահանգով։

§ 21. Խորհրդի զբաղմունքի առարկաներն են։

ա). Ընդհանուր ժողովների բոլոր օրինաւոր վճիռների կատարումը։

բ.) Պահել ինվէնտարը, ել և մուտից մատեանները, ընկերութեան գոյքի, գործերի և գումարների հաշիւները, ինչպէս և ընկերութեան անդամների անւանացուցակը։

գ.) Բանակցել, պայմաններ կապել և հաշիւներ վարել խմբերի անտրպրընեօրների և սիրողների հետ։

е) Представленіе Общему Собранію предположеній, докладовъ и соображеній о мѣрахъ къ достиженію цѣли Общества и къ дальнѣйшему развитію его средствъ и дѣятельности;

ж) Вообще всѣ исполнительныя и административныя распоряженія по дѣламъ Общества;

з) Контроль надъ дѣятельностью мѣстныхъ Правленій и Отдѣленій.

ПРИМѢЧАНІЕ За цѣлость суммъ и имущества Общества отвѣчаютъ всѣ члены Совѣта, исключая случаевъ, когда растрата таковихъ произведена однимъ изъ членовъ безъ вѣдома другихъ или членами мѣстныхъ Правленій.

§ 22. Совѣтъ ежегодно представляетъ Общему Собранію подробный отчетъ о составѣ и дѣятельности Общества и положеніи его дѣла. По разсмотрѣніи и одобреніи отчета Общимъ Собраніемъ, онъ печатается въ мѣстныхъ газетахъ и представляется на русскомъ языкѣ въ двухъ экземплярахъ Тифлисскому Губернатору. Въ теченіе недѣли, предшествующей Общему Собранію, отчетъ Совѣта долженъ быть предъявленъ каждому члену, желающему заблаговременно ознакомиться съ нимъ.

§ 23. Засѣданіе Совѣта считается состоявшимся, если въ немъ, кромѣ Предсѣдательствующаго, присутствуетъ не менѣе трехъ членовъ. Въ случаѣ отсутствія Предсѣдателя и его Товарища, мѣсто Предсѣдателя заступаетъ одинъ изъ членовъ Совѣта, по старшинству избранія. Засѣданія Совѣта бываютъ не менѣе одного раза



*դ.) Կառավարել ընկերութեան բոլոր գոյքերը և գործերը պատասխանատու և հաշւետու լինելով ընդհանուր ժողովի առաջ։*

*ե.) Ընձեռել դերասանական և սիրողների խմբերին ռէպէրտուար, ակսէսուարներ և ուրիշ պարագաներ ներկայացումներ կազմակերպելու համար։*

*զ.) Ընդհանուր ժողովին առաջարկութիւններ և զեկուցումներ անել այն միջոցների մասին, որոնք կարող են նպաստել ընկերութեան նպատակների իրագործման և աւելի զարգացնել նրա նիւթականը ու գործունէութիւնը։*

*է.) Առհասարակ ամեն տեսակ կատարողական և վարչական տնօրինութիւններ անել ընկերութեան գործերի վերաբերմամբ։*

*ը.) Վերահսկել տեղական վարչութիւնների և ճիւղերի գործունէութեանը։*

*Ծանօթութիւն։—Ընկերութեան գումարների և գոյքի ամբողջութեան համար պատասխանատու են խորհրդի բոլոր անդամները, բացի այն դէպքից, երբ զեղծում կատարել է խորհրդի մի անդամը առանց միւսների գիտութեան, կամ թէ կատարել են տեղական վարչութիւնների անդամները։*

§ 22. *Խորհուրդը ամեն տարի մանրամասն հաշիւ է ներկայացնում ընդհանուր ժողովին ընկերութեան կազմի ու գործունէութեան և գործերի ընդհանուր դրութեան մասին։ Հաշիւը քննելուց և հաստատելուց յետոյ, տպագրւում է տեղական թերթերում և երկու օրինակ ռուսերէն լեզուով ներկայացւում է Թիֆլիսի նահանգապետին։ Ընդհանուր ժողովի նախորդ շաբաթւայ ընթացքում խորհրդի հաշիւը պէտք է ներկայացնել նրա հետ*

въ мѣсяцъ. На засѣданія Совѣта, съ правомъ совѣщательнаго голоса, могутъ быть приглашаемы члены Общества и посторонніе лица. Въ случаѣ равенства голосовъ, мнѣніе Предсѣдательствующаго даетъ перевѣсъ.

§ 24 Предсѣдателъ Совѣта:

а) Созываетъ Общія собранія и засѣданія Совѣта;

а) Руководитъ совѣщаніями Совѣта, а также и Общимъ Собраніемъ до выбора Предсѣдателя послѣдняго;

в) Наблюдаетъ за точнымъ исполненіемъ сего устава и

г) Сносится отъ имени Общества съ подлежащими учрежденіями и лицами.

## VI. Комиссіи.

§ 25. Для освидѣтельствованія и провѣрки имущества, дѣлъ и счетовъ Общества, Общія Собранія ежегодно избираютъ ревизіонную комиссію, въ числѣ трехъ членовъ и двухъ кандидатовъ къ нимъ.

ПРИМѢЧАНІЕ. Порядокъ дѣйствія ревизіонной комиссіи опредѣляется утвержденною Общимъ Собраніемъ инструкціею.

§ 26. Для разсмотрѣнія и оцѣнки драматическихъ произведеній, подлежащихъ постановкѣ на сценѣ или представляемыхъ на соисканіе премій, и для разсмотрѣнія отдѣльныхъ вопросовъ



*վաղօրօք ծանօթանալ ցանկացող իւրաքանչիւր անդամին։*

§ 23. *Խորհրդի նիստը կայացած է համարւում, եթէ՝ բացի նախագահողից՝ ներկայ են առնուազն երեք անդամներ։ Իթէ նախագահը և փոխ նախագահը բացակայ են, նախագահում է խորհրդի մի ուրիշ անդամ ըստ ընտրութեան աւագութեան։ Խորհրդի նիստերը գումարւում են առնուազն ամիսը մի անգամ։ Խորհրդի նիստերին կարող են հրաւիրւել խորհրդակցական ձայնով նաև ընկերութեան ուրիշ անդամներ և կողմնակի անձեր։ Ձայների հաւասարութեան դէպքում նախագահողի կարծիքը գերակշռութիւն է տալիս։*

§ 24. *Խորհրդի նախագահը՝*

*ա.) Հրաւիրում է ընդհանուր ժողովներ ն խորհրդի նիստեր։*

*բ.) Ղեկավարում է խորհրդի խորհրդակցութիւնները, ինչպէս և ընդհանուր ժողովը, մինչև այս վերջինիս նախագահի ընտրութիւնը։*

*բ.) Հսկում է այս կանոնադրութեան ճիշտ գործադրութեան վրայ և*

*դ.) Ընկերութեան անունից յարաբերութիւն է ունենում զանազան հաստատութիւնների և անձերի հետ։*

## VI. *Յանձնաժողովներ*

§ 25. *Ընդհանուր ժողովը ընկերութեան գոյքերը, գործերը և հաշիւները քննելու և վերստուգելու համար իւրաքանչիւր տարի ընտրում է մի վերստուգիչ յանձնաժողով, բաղկացած երեք անդամից և երկու փոխանդամից։*

или исполненія отдѣльныхъ порученій, Общія Собранія избираютъ изъ числа членовъ Общества особыя комиссіи, составъ и кругъ дѣйствій которыхъ опредѣляются Общимъ Собраніемъ.

## VII Мѣстныя Отдѣленія.

§ 27. Общество, въ лицѣ своего Совѣта, имѣетъ право, въ установленномъ закономъ порядкѣ, открывать Отдѣленія въ предѣлахъ Кавказскаго Края, на основаніи сего устава.

§ 28. Для открытія Отдѣленія требуется, чтобы записались въ члены не менѣе 15-ти лицъ.

§ 29. Мѣстныя Общія Собранія, Правленія и Комиссіи завѣдываютъ исключительно дѣлами, касающимися мѣстныхъ Отдѣленій, руководствуясь указаніями сего устава, расходуя на мѣстныя нужды мѣстныя средства.

§ 30. Правленіе мѣстнаго Отдѣленія состоитъ изъ пяти членовъ и двухъ кандидатовъ къ нимъ, избираемыхъ, выбывающихъ и избирающихъ должностныхъ лицъ въ томъ же порядкѣ, что и члены Совѣта.

§ 31. Засѣданіе Правленія считается состоявшимся, если въ немъ присутствуетъ не менѣе трехъ членовъ.

§ 32. Правленія періодически доставляютъ свѣдѣнія о дѣятельности Отдѣленій Совѣту, а за мѣсяцъ по годичнаго Общаго Собранія въ Тифлисѣ обязательно посылаютъ Совѣту годич-



*Ծանօթութիւն.*—Վերստուգիչ յանձնաժողովի գործելակերպը որոշւում է ընդհանուր ժողովից հաստատուած հրահանգով։

§ 26. Ներկայացման կամ մրցանակի առաջարկուած թատերական երկերը քննելու և գնահատելու, ինչպէս նաև առհասարակ առանձին հարցեր քննելու և կամ առանձին յանձնարարութիւններ կատարելու համար ընդհանուր ժողովները ընտրում են ընկերութեան անդամների միջից յանձնաժողովներ, միանգամայն որոշելով նրանց կազմը և գործունէութեան շրջանը։

## VII. Տեղական ճիւղեր

§ 27. Ընկերութիւնը, յանձին իր խորհրդին, իրաւունք ունի, օրինական կարգով, ճիւղեր բանալ Կովկասի սահմաններում, այս կանոնադրութեան հիման վրայ։

§ 28. Ճիւղ բանալու համար անհրաժեշտ է, որ անդամ գրւեն առնուազն 15 հոգի։

§ 29. Տեղական ընդհանուր ժողովները, վարչութիւնները և յանձնաժողովները վարում են միմիայն տեղական ճիւղերին վերաբերեալ գործերը, ղեկավարւելով այս կանոնադրութեան ցուցմունքներով և տեղական կարիքների վրայ տեղական միջոցները ծախսելով։

§ 30. Տեղական ճիւղի վարչութիւնը կազմւում է հինգ անդամից և երկու փոխանդամից, որոնք ընտրւում են, պաշտօնից հեռանում են և իրանց միջից պաշտօնակատար անձինք են ընտրում նոյն կարգով, ինչ որ խորհրդի անդամները։

ный отчетъ о дѣятельности Отдѣленій и о ихъ суммахъ и имуществѣ.

§ 33. Для освидѣтельствованія и провѣрки имущества, дѣлъ и счетовъ Отдѣленій. Общія Собранія ежегодно избираютъ ревизіонную комиссію въ числѣ трехъ членовъ

## VIII. Общія правила.

§ 34. Члены Отдѣленія Общества, присутствующіе на Общемъ Собраніи въ Тифлисѣ или другого Отдѣленія, пользуются правомъ голоса наравнѣ съ мѣстными членами Общества. Такимъ же правомъ пользуются Тифлисскіе члены Общества въ Обшихъ Собраніяхъ всѣхъ Отдѣленій Общества.

§ 35. Общество имѣетъ свою печать съ надписью: „Печать Армянскаго Драматическаго Общества“, хранящуюся у Предсѣдателя Совѣта.

ПРИМѢЧАНІЕ. Отдѣленія имѣютъ свои печати съ наименованіемъ Отдѣленія, хранящіяся у Предсѣдателей Правленій.

§ 36 По мѣрѣ развитія средствъ и дѣятельности Общества, члены Совѣта, Правленій и Комиссій могутъ быть вознаграждаемы по усмотрѣнію Общихъ Собраній.

## XI. Закрытіе Общества.

§ 37. Если Общество по какимъ либо обстоятельствамъ прекратитъ свое существованіе,



*§ 31. Վարչութեան նիստը կայացած է համարւում, եթէ ներկայ են լինում առնուազն երեք անդամ։*

*§ 32. Վարչութիւնները պարբերաբար տեղեկութիւններ են հաղորդում խորհրդին ճիւղերի գործունէութեան մասին, իսկ Թիֆլիսի տարեկան ընդհանուր ժողովից մի ամիս առաջ պարտաւոր են ուղարկել խորհրդին տարեկան հաշիւ ճիւղերի գործունէութեան և նրանց գումարների և գոյքերի մասին։*

*§ 33. Ճիւղերի գոյքի, գործերի և հաշիւների քննութեան ու ստուգման համար ընդհանուր ժողովները ամեն տարի ընտրում են երեք անդամից բաղկացած վերստուգիչ յանձնաժողով։*

## VIII. *Ընդհանուր կանոններ*

*§ 84. Ընկերութեան ճիւղերի այն անդամներին, որոնք ներկայ են գտնւում Թիֆլիսի կամ որևէ այլ ճիւղի ընդհանուր ժողովին, տրւում է ձայնի իրաւունք ընկերութեան տեղական անդամներին համահաւասար։ Նոյնպիսի իրաւունք է տրւում ընկերութեան Թիֆլիսի անդամներին ընկերութեան բոլոր ճիւղերի ընդհանուր ժողովներին։*

*§ 35. Ընկերութիւնը ունի իր կնիքը, «Հայոց Դրամատիկական Ընկերութեան կնիք» մակագրութեամբ, որ պահւում է խորհրդի նախագահի մօտ։*

*Ծանօթութիւն.—Ճիւղերը ունեն իրանց կնիքները ճիւղի անունով, որոնք պահւում են վարչութիւնների նախագահների մօտ։*

то всѣ остающіеся капиталы и имущество Общеста обращаются на удовлетвореніе культурно—просвѣтительныхъ нуждъ русскихъ армянъ, по постановленію всѣхъ Отдѣленій Общества (см. § 16), за исключеніемъ тѣхъ капиталовъ и имуществъ, назначеніе коихъ на случай закрытія Общества предусмотрѣно самими жертвователями.



§ 36. Երբ ընկերութեան միջոցները և գործունէութիւնը հետզհետէ մեծ ծաւալ ստանան, խորհրդի, վարչութիւնների և յանձնաժողովների անդամները կարող են վարձատրութիւն ստանալ ըստ ընդհանուր ժողովի հայեցողութեան։

## IX. Ընկերութեան փակումը

§ 37. Եթէ ընկերութիւնը որևէ հանգամանքի շնորհիւ դադարեցնի գոյութիւնը, ընկերութեան բոլոր մնացած գումարները և գոյքը գործադրուելու են Ռուսահայերի կուլտուրական-կրթական կարիքների գոհացման համար, ընկերութեան բոլոր ճիւղերի որոշմամբ (տես § 16), բացի այն դրամագլուխներից և գոյքերից, որոնց գործադրութիւնը, ի դէպ ընկերութեան փակման, նախորոշել են նուիրատուները իրանք։

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А. Публичная Библиотека
7/VI 1922
ИМЕНИ А. Мясникова
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՀՀ Ազգային գրադարան
NL0000604